

## ԵՐԳԻՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ

## Փեսայ.

Բարով տեսայ, ազիզ փեսայ,  
Ուն ու զլուխդ լիդր ու կէս ա,  
Անգաճներդ թըզան պէս ա,  
Ուճքերդ իշի ուճքից զէշ ա:

Քու կերածդ սարի թան ա,  
Դու հենց գիդես թէ մի բան ա,  
Որ գիդենաս շատ լաւ բան ա,  
Քու անուսդ փթաթան ա:

Քեզ պէս փէսին փստացնեմ,  
Կըտեր ձէրին նստացնեմ,  
Մի կտոր հացով կշտացնեմ,  
Մի թաս գինով հարփացնեմ:

\*

\*

ՉՓէսէն եկել է, թեր խաշեցէք,  
Տե՛նէք ուսմ ա՛ էլ խաշեցէք,  
Որ տէնուք, որ ուսում չի,  
Անգաճուցը վեր քաշեցէք:  
(Փեսին ծաղրելիս)

\*

\*

Պառաւ, պառաւ,  
Աստո՞ժ ֆոքիդ առաւ:  
Մեռաւ, սառաւ,  
Էլ յեզ դառաւ:

Պառաւ, պառաւ, չար պառաւ,  
Աստո՞ժ ֆոքիդ չուստ առաւ:  
(Ասում են վատ, չար պառաւներին)

\*

\*

Ալակոշ, հաւի գօշ,  
Կարմիր գինի, սիպտակ լօշ:  
(Սևին ծաղրելիս)

\*

\*

Չոգուրն ընգաւ կարասը,  
Մուկը կերաւ էրեսը,  
(Մաղկատար երեխային շարացնելիս):

\* \* \*  
Քաշալ, քաշալ, քաշ քաշի,  
Քաշին ուտի շան կաշի,  
Իբ բաժինը հում բերէք,  
Մեր քաշալին տուն բերէք:  
(Քաշալին ծաղրելիս):

\* \* \*  
Չուախ, չուախ, չու գցէ,  
Չուախի հիտը չըլնու գցէ,  
Եփոր հէրդ տուն կգայ,  
Ըղաքին սուփրայ գցէ:  
(Գաղին ծաղրելիս.)

\* \* \*  
Չորան, չորան,  
Չոր գղորան,  
Մի հաց ունես՝  
Միան կերած,  
Մի կնիկ ունես,  
Ճակասն էրած:  
(Չոգուին ծաղրելիս.)

\* \* \*  
Աղքատն ունէր մի մողի,  
Տարաւ էրես մի խողի,  
Ուրբաթ, շաբաթ միս կերաւ,  
Լիս կիրակի փիս կերաւ:  
(Գաս ուտողին են ծաղրում.)

\* \* \*  
Բոշա, բոշա,  
Տրտինդ լոշ ա,  
Մարդդ մեռնի,  
Գանք թամաշա:  
(Բոշին ծաղրելիս.)

### ԼՕՌՈՒՇՅ ԳԻՒՂԱՑԻՆՆԻՐԸ

Գինի խմող շուլակերցիք, աւուկակեր ճոնկանեցիք,  
Բաղարճ ուտող արճիչեցիք, կեռ-կեռ գիզան շնողնեցիք,

Փիլիսուակներ <sup>1)</sup> հաղպատեցիք, պտըրաքի հասրաթ ոռնակեցիք,  
 Հարսնասիրուն սանահնեցիք, թունդ մսակեր մազանեցիք,  
 Ղոնաղ դոան <sup>2)</sup> աքորվեցիք, փոսում թր... հազվըցիք,  
 Գոմշաբերան ամոշեցիք, քէօխվայ թակող ուզունչարցիք,  
 Մատաղ ուտող արգունեցիք, Նրչոր էլած այգեհատցիք,  
 Քարից թուած ծաթերեցիք, խեղախորով զեշաղացիք,  
 Ղուզղուն <sup>3)</sup> ուտող կուրթանեցիք, սաթիլջամ էլած ձորագեղցիք,  
 Գիլան խեղդող զսեղեցիք, մեղր ուտող քարինջեցիք,  
 Տանձ ուտող մարցըցիք, տերև ուտող լորուտեցիք,  
 Փետաթակ արած շամուտեցիք, թուրքի սանամէր աթանեցիք,  
 Թուրքի կնքաւոր անիգորցիք,  
 Ձի գողանող-ատկազ ըլող սաղախուեցիք,  
 Կակալ ուտող-տենդախորով գիւլուրաղցիք,  
 Հարս նդատող խժոռնեցիք, պոպոք ուտող խոթմիլեցիք,  
 Մոմի ուտող օփրէթեցիք, իշխառանչ ուտող շանաղչեցիք,  
 Թուրք սպանող աղբօրփցիք, արաղ խնդղող պրիվօլնեցիք,  
 Ուռքու կիւպ ուտող ուտուտեցիք, թարս բունտովչի հայդարեկեցիք,  
 Բադի ձերս ուտող զարամանաղցիք,  
 Թուրքի թեղան <sup>4)</sup> պատող-տանող լեղանեցիք,  
 Մեղր ուտող, ձերպին թր... ազարագցիք,  
 Չհասներ սիրող բերդըցիք,  
 Թանգ միկիտան, տրիցատկի տակը մոմ հալող ջալալ-օղիեցիք,  
 Մարդաթ սիրող զեսոգեհատեցիք, բողկը ուտող գիւլազարակեցիք,  
 Տէրտէր կը . . . հորարձուեցիք, . . . լոր ուտող վարդարուրցիք,  
 Մեռել թոլ անող դամշուկուտեցիք, մեռել խաշող քուրդերանցիք,  
 Ղաշաղ <sup>5)</sup> պահող շահալուեցիք, քար-ղում ուտող ալերեքսեցիք,  
 Արևի եփած, անձրևի թակած սըղբբէաղցիք:

## ԱՅՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐ <sup>1)</sup>

### ՄԱՆԱԹԵՐ-ՔԱՆՈՐ.

Ով սիրելիք անգամ արէք,  
 Գոզեմ սանամէրն ու քաւոր,

<sup>1)</sup> Մանրանուկ ուտող: <sup>2)</sup> էիլը սղանդ: <sup>3)</sup> Բազիլ մեծ տեսակ: <sup>4)</sup> Եթէլանս  
 սուսն են ոչխարի ամրող մըթուց լինած այն սմանին, որում ազալուր աշած  
 գոմէրը հաւաքում են մեթալ լինելու համար: <sup>5)</sup> Աւաղակ:

<sup>1)</sup> Լուին, որքան ինձ յայտնի է, ունեցել է միայն մի,  
 փոքր ի շատէ նշանաւոր աշուղ, որ ինքնուրոյն երգեր է յօրինել